չափած ու ձևած է յատկապէս քաջասիրտ նիժեցիների համար։ Այս իսկ պատճառով, ամբողջ Նուխու գաւառի կատաղի և անզուսպ թուրքերը վախում ու սարսափում են միմիայն քաջամարտիկ Նիժեցիներից։ Ոտքից գլուխ զինուած թուրքը եթէ հանդիպի անզէն Նիժեցուն, նրան մօտենալ և թալանել չի համարձակուի երբէք. բայց եթէ թրքախօս կամ սարեցի հայախօս Հային պատահի, նրան կհայհոյէ, ձեռքին եղած-չեղածը կխլէ, իսկ ընդդիմացողին էլ կսպանէ և ապա հանդիստ խղճով կշարունակէ իւր ճանապարհը։

Է

ՈՒՏԻԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Ուտիացոց աշխարհի թրքախօս և ուտիախօս գիւղերի մէջ միմիայն Վարդաշէն գիւղաքաղաքը գտնուում է բարեյաջող վիճակի մէջ՝ թէ բարոյապէս և թէ տնտեսապէս։ Այն էլ յատկապէս այն պատճառով, որ Հայոց Աշոտ Երկաթ թագաւորի ժամանակակից Ուտիացի յայտնի Ցլիկ Ամրամի հարազատ տոհմից սերուած և մինչև մեր օրերը հասած, այժմեան Սիլիկեան եղբարք, իրենց զինուորական կրթութեամբ, իրենց հեռատես ու հայրենասէր ձգտումներով և առևտրական-դոր-